

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Մրգավան համայնքի ղեկավարի 2018 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

2018 թվականի հուլիսի 16-ին Մրգավան համայնքում կայացած հանրային լսմանը մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմը, ավագանու անդամներ, ուսուցիչներ, համայնքի բնակիչներ:

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Սամվել Վարդանյանի

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Անահիտ Թադևոսյանի

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ Արարատի մարզի Մրգավան համայնքի ղեկավար Սամվել Վարդանյանի հաշվետվությունը՝ 2018 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ. ՈՐ

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքի բնակիչներին, մարզպետարան և այլ կազմակերպություններ տրվել և առաքվել են 333 տարբեր բնույթի տեղեկանքներ, գրություններ, նամակներ, համայնքի բնակիչներից ստացել ենք 92 դիմումներ, որոնց տրվել է համապատասխան ընթացք, քննարկվել են մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացած 150-ից ավելի պաշտոնական գրություններ և նամակներ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

Համայնքապետարանը համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկել է համայնքապետարանի աշխատակազմի ժողովների և ավագանու 4 նիստերի ժամանակ՝ տալով համապատասխան լուծում:

Համայնքի ղեկավարը կայացրել 63 որոշում, 22 կարգադրություն:

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են տանամարման աշխատանքներ, մաքրվել են առուները, փողոցները, ամիսը չորս անգամ կատարվել է աղբահանություն:

Համայնքի բյուջեից՝

Աղբահանության համար հատկացվել է 900.0 դրամ:

Մշակույթի տան մասնակի վերանորոգման համար հատկացվել է 469.4 դրամ:

Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման համար 1271.6 դրամ, որից 621.6 դրամը էլեկտրաէներգիայի վարձ, 650.0 դրամը ամանօրյա զարդարանքների և լուսարձակների տեղադրման համար:

Մշակութային միջոցառումների իրականացման համար՝ 810.0 դրամ/մարտի 8, Ջատկի տոն, հունիսի 1, ապրիլի 24, մայիսի 9/:

Հակակարկտային ծառայության գումար՝ 200.0 դրամ:

Նախադպրացական ուսուցման համար՝ 3557.5 դրամ:

Կառավարման ապարատի ծախսեր՝ 12282.3 դրամ:

Գրադարանային ծառայություն՝ 438.0 դրամ:

Կրթության այլ դասերին չպատկանող՝ վերջին զանգի համար՝ 99.9 դրամ:

Գույքի նկատմամբ իրավունքի գրանցման համար՝ 400.0 դրամ:

Եկամուտները կազմել են.

ա/ հողի հարկ - 1733.3 դրամ

բ/ գույքահարկ - 1497.6 դրամ

գ/ տեղական տուրք - 703.5 դրամ

դ/ հողերի վարձակալության վարձավճար - 82.6 դրամ

ե/ ծնողական վճար՝ 518.0 դրամ


զ/ դոտացիա՝ 15756.6 դրամ

է/ աղքատիանության վճար՝ 909.7 դրամ

Համայնքի սոցիալապես անապահով բնասանիքներին տրվել է 1390.0 դրամ ֆինանսական աջակցություն:

Համայնքում հարազատին կորցրած անձանց հուղարկավորության նպաստ հատկացվել է 150.0 դրամ:

Սրգավան համայնքի ղեկավար



Մամվել Վարդանյան